

## ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև մշակույթի, արվեստի, կրթության, գրոսաշրջության, սպորտի և զանգվածային լրատվության միջոցների բնագավառներում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հնդկաստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,  
դեկավարվելով պատմական և ավանդական բարեկամությամբ,  
հօչակելով իրենց ձգտումը՝ զարգացնել և ամրապնել  
բարեկամությունն ու համագործակցությունը երկու երկրների միջև  
մշակույթի, արվեստի, կրթության, տուրիզմի, սպորտի և զանգվածային  
լրատվության միջոցների բնագավառներում,  
համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

Կողմերը հօչակում են իրենց ձգտում՝ պահպանել և ամրապնել  
համագործակցությունը մշակույթի, արվեստի, կրթության, տուրիզմի,  
սպորտի և զանգվածային լրատվության միջոցների բնագավառներում:

### Հոդված 2

Կողմերը ցանկություն են հայտնում զարգացնել փոխադարձ  
մշակութային փոխանակումները, խթանել համագործակցությունը և  
նպաստել երկու Կողմերի կրթական, գիտական, մշակութային, սպորտային  
և հետազոտական հաստատությունների միջև հարաբերությունների  
զարգացնանը:

### Հոդված 3

Կողմերից յուրաքանչյուրը, իր սեփական պահանջների և  
հնարավորությունների սահմաններում, կընդունի մյուս Կողմի  
երաշխավորած քաղաքացիներին՝ կրթական, մշակութային, գիտական,  
տեխնիկական հաստատություններում ուսման, վերապատրաստման,  
հետազոտական աշխատանքների իրականացման և մասնագիտացման  
նպատակներով:

## Հոդված 4

Կողմերից յուրաքանչյուրը, ելնելով սույն Համաձայնագրի նպատակներից, համաձայն իր երկրի օրենսդրության և կանոնակարգերի, մյուս երկրի քաղաքացիներին հնարավորություններ կընձեռի գիտական, ուսումնական և գիտհետազոտական աշխատանքների համար օգտվելու գրադարաններից, պատկերասրահներից, արխիվներից և այլ մշակութային հաստատություններից:

## Հոդված 5

Կողմերը սույն Համաձայնագրի նպատակների համար, ըստ յուրաքանչյուր երկրի օրենսդրության, կքննարկեն իրենց երկրում մշակութային հաստատությունների ստեղծման հնարավորությունը:

## Հոդված 6

Կողմերը կաշխատեն դյուրացնել երկու երկրների համալսարանների և կրթական այլ օջախների գիտական աստիճանների, վկայագրերի և վկայականների ձանաչումը:

## Հոդված 7

Կողմերը կնպաստեն երկու երկրների միջև համագործակցությանը կինեմատոգրաֆիայի, հեռուստատեսության և ռադիոյի միջոցով:

## Հոդված 8

Կողմերը հնարավորության սահմաններում կաջակցեն սպորտի բնագավառում երկու երկրների համագործակցությանը:

## Հոդված 9

Կողմերը հնարավորության սահմաններում կաջակցեն գրոսաշրջության բնագավառում երկու երկրների համագործակցությանը:

## Հոդված 10

Կողմերը կձեռնարկեն և կապահովեն հնարավոր բոլոր միջոցները սույն Համաձայնագրի կատարումը դյուրացնելու համար:

## Հոդված 11

Սույն Համաձայնագրի դրույթների իրականացման նպատակով Կողմերը համաձայնեցին ստեղծել յուրաքանչյուր Կողմից հավասար քանակությամբ ներկայացուցիչներից բաղկացած խումբ: Խումբի նպատակները կլինեն՝

ա/ մշակել փոխանակումների մանրամասն ծրագիր, և

բ/ պարբերաբար միմյանց տեղեկացնել Համաձայնագրի կատարման նկատմամբ հսկողության մասին:

Խումբը կհանդիպի ըստ անհրաժեշտության:

## Հոդված 12

Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

## Հոդված 13

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, ուժի մեջ կմնա 5 տարի ժամկետով և ինքնաբերաբար ամեն անգամ կերկարածզվի հաջորդ 5 տարվա համար, եթե Կողմերից մեկը սույն Համաձայնագրի ժամկետի ավարտից վեց ամիս առաջ գրավոր չտեղեկացնի մյուս Կողմին նրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Համաձայնագրի դադարեցումը չի ազդի իրականացված կամ ընթացքի մեջ գտնվող ծրագրերի վրա՝ մինչև նրանց ավարտը:

Կնքված է Նյու Շելի քաղաքում 1995 թվականի դեկտեմբերի 14-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, հնդկերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարագոր են:

Կասկածի դեպքում անգլերեն տեքստը գերակայում է:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1995 թվականի դեկտեմբերի 14-ից: